# ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՈՍԿԱՆ ՔՀՆ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԿԵՐՊԱՐՆ ԸՍՏ ՄԵԾԱՑՈՒՍՅԻ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ

(համեմատական վերլուծություն)

Քրիստոնեական սրբերի շարքում իր առանձնահատուկ տեղն ունի մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի մայր Ս. Կույս Մարիամը: Անշուշտ, մեծ առաքինություն է հրաժարվել աշխարհիկ կյանքից, բազմատեսակ զվարճություններից եւ սեփական անձը նվիրագործել՝ Աստծուն ծառայություն մատուցելու: Ս. Աստվածածինը մեծագույն առաքինության հասցրեց այդ վեհ առաքելությունը եւ արժանի եղավ Աստծո Որդու մայրը լինելու, աշխարհի Փրկչին ծնունդ տալու, մարդկային հոգեւոր կյանքի փրկության միջոց լինելու: Նա Կույս էր եւ Աստծո մայրը լինելու շնորհին ընդունելուց հետո էլ մնաց հավերժ կույս՝ անաղարտ եւ սուրբ, քանզի օծվել էր աստվածության սուրբ յուղով. Աստծո անունը «իւղ հեղեալ է» (Երգ Ա. 2):

Հայ Եկեղեցու վարդապետության մեջ Աստվածածնի մայրության գաղափարը երկու հիմնական սկզբունքով է դրսեւորվում՝ աստվածաբանական եւ քնարերգական: Այդ երկու սկզբունքի յուրահատուկ վկայությունը Տիրամորը նվիրված շարականներն ու տաղերն են: Ս. Կույսին նվիրված երգերի համաձայն՝ նրա մայրությունն ունի երկու հանգրվան. նա միակն էր, որ հղացավ Ս. Հոգուց եւ ընտրվեց որպես Փրկչի մայր: Այս երկու իրողությունները վավերացնում են Աստծո Որդու մարդեղացման խորհուրդը: Աստվածածնի մայրությունը սովորական չէր, այլ աշխարհը վերափոխող, փիեզերքը փրկագործող մայրություն էր[1]:

Ի մտի առնելով այս ամենը՝ մեծացուցեն շարականների մեջ առկա տվյալների հիման վրա ստորեւ կփորձենք վերծանել վերոնշյալի ուղղափառ ձեւակերպումն՝ ըստ շարականների: Պատահական չէ, որ մեծացուցեների, ինչպես նաեւ Ս. Բարսեղ Մեծի «Քրիստոսի ծնունդ՝ իրական», Ս. Գրիգոր Նազիանզացու

1 Տես **Նակոր Քյոսեյան**, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 233:

«Քրիստոս ծնեալ» եւ Ս. Գրիգոր Նյուսացու «Յաւետիս Աստուածածնին»[2] ճառերի միջոցով հաստատվում է Հայ Եկեղեցու դիրքորոշումը Ս. Աստվածածնի կյանքի եւ առաքելության վերաբերյալ: Տիրամորը նվիրված շարականների առաջին եւ կարեւորագույն առանձնահատկությունն ու նշանակությունը պատմաաստվածաբանական է. Հայ Եկեղեցու դիրքորոշմամբ՝ Աստվածամոր մասին վարդապետության առանցքն են Մարիամի աստվածամայրությունը եւ այդ մայրության աստվածային բնույթը: Պետք է նշել, որ Հայ Եկեղեցին Աստվածածնի մասին վարդապետությունը մշակել է՝ առաջնորդվելով Եփեսոսի 431 թ. ժողովի որոշումներով: Հայ Եկեղեցին Տիրամոր մասին վարդապետությունն արտահայտել է շարականների եւ մասնավորապես մեծացուցեների միջոցով: Սույն հոդվածի շրջանակներում Աստվածածնի կերպարի առանձնահատկությունների վերլուծությունը նույնպես ունի պատմաաստվածաբանական բնույթ. Աստվածածնի կերպարի պատմական ու աստվածաբանական կողմերը վերլուծված են մեկ ընդհանուր խորագրի ներքո:

**Ս. Աստվածածնի ազգաբանությունը.** Արշակ Տեր-Միքելյանը գրում է. «Ընտրյալ ազգից ընտրվում է Մարիամ Ս. Կույսը, վասնզի Աստուծո փրկություն ընդունելու համար ընտրվեց այն ազգն եւ նախապատրաստվեց, այնպես որ նրա նախապատրաստության կատարումն եղավ Մարիամ Ս. Կույսը»[3]: Այս են վկայում նաեւ Տիրամորը նվիրված շարականները եւ Ս. Գրիգոր Նյուսացու ճառը. «Քանզի յամենա՛յն ազգաց նա միայն Ս. Հոգով եւ մարմնով եղեւ: Զի նա միայն կրեաց զայն որ կրէ զամենայն բանիւ զաւրութեա՛մբ իւրով»[4]:

Ս. Աստվածածնի ծննդյան կանոնում զետեղված մեծացուցեում կարդում ենք. «Նահապետացն Աբրահամու Իսահակայ եւ Յակոբայ պարգեւեցար ի յԱստուծոյ կոյս Մարիամ դուստր, նոցին երանեն ազգ եւ ազինք այսօր զծնեալդ ի յԱննայէ»[5]: Միակ մեծացուցեն շարականն է, որ պատմում է Ս. Կույսի ազգաբանության մասին: Ս. Մարիամը սերում է մեր նախահայրերից՝ Աբրահամից, Իսահակից եւ Հակոբից: «Հայ մարեմաբանութեան մեջ «Մարիամ-Աբրահամ» հոգեւոր աղերսը հետեւեալ կերպ է մեկնաբանւում. Ս. Կոյս Մարիամ հարազատ դուստրն է Աբրահամին. այլաբանօրէն կրնանք ըսել. Աբրահամ ծնաւ... Մարիամը՝ ...որ նախահօր Աբրահամին նման պիտի կոչուեր «Ս. Կոյս Մարիամ մեր ամենուն մայրը»: Աբրահամ Աստուծոյ գոյութիւնը իր մէջ զգաց, Ս. Կոյսն ալ Աստուծոյ Որդւոյն գոյութիւնը մարմնաւորապէս կրեց իր արգանդին մէջ»[6]: Այս

2 **Ս. Գրիգոր Նյուսացի**, «Յաւետիս Աստուածածնին», բն. կազմ.՝ Անդրանիկ սրկ. Հովհաննիսյան «Էջմիածին», ԺԲ., 2012, էջ 81-92:

3 **Արշակ Տեր-Միքելյան**, Հայաստանյայց Ս. Եկեղեցու Քրիստոնեականը, ծանոթ.՝ Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 185:

4 ՄՄ. ձեռ., 4709, թ. 36ա:

5 «Զայնքաղ Շարական», Մծց. ԴԿ «Նահապետացն Աբրահամու», Ս. Էջմիածին, 1888, էջ 9 (այսուհետեւ՝ «Զայնքաղ Շարական»):

6 **Վաչէ Ծ. վրդ. Իգնատիոսեան**, Աստուածամայրը, Երեւան, 1990, էջ 8. տե՛ս Հ. Քյոսեյան, Դրվագներ, էջ 10:

մասին գրում է նաեւ Բարսեղ Կեսարացին. «...զուշակումն ունին զընդ նոքաւք բնութեանն, որպէս Աբրամ եւ Իսաակ եւ Իսրայէղ. քանզի սոցա իւրաքանչիւրոյ ուրուք յորջորջումն՝ ոչ այնպէս զմարմնոյն նկարագրութիւն, որչափ զիւրութիւն զառ ի նոցանէ ուղղելոց առաքինութեանցն բացայայտէ. վասն այսորիկ եւ այժմ Յիսուս յորջորջի, այսինքն՝ փրկութիւն ժողովրդեան»[7]: Սրա վառ վկայությունը գտնում ենք Ավետարանում: Մատթեոս ավետարանիչը ներկայացնում է մի ազգաբանություն, որն սկսվում է. «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու» (Մատթ. Ա. 1) եւ ավարտվում «Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն Մարեմայ որում խօսեցաւ զՄարիամ կոյս յորմէ ծնաւ Յիսուս, որ անուանեցաւ Քրիստոս» (Մատթ. Ա. 16) տողերով: Իսկ Ղուկաս ավետարանիչը նույն ազգաբանությունը ներկայացնում է հակառակ դասավորությամբ, այսինքն՝ սկսում է Քրիստոսով եւ հասցնում մինչեւ Ադամ (Ղուկ. Գ. 23-38): Այստեղ ժամանակագրական առումով հերթականությամբ պետք է առանձնացնել աստվածաշնչյան մի քանի անձանց՝ Ադամ, Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Դավիթ, Աննա, եւ վերջում Ս. Մարիամ ու Հիսուս Քրիստոս: Երկար շառավիղ, որ Հին Ուխտից ձգվում է դեպի Նոր Ուխտ՝ ցույց տալով, որ Հինն անբաժան է Նորից եւ մարգարեանում է Նորի մասին: Հնի եւ Նորի միավորումը իրականանում է Ս. Կույսի միջոցով: Նա է, որ իր Որդու ծնունդով միավորում է անցյալն ու ներկան եւ տալիս ապագայի հույս: Աբրահամի, Իսահակի եւ Հակոբի կանայք՝ Սառան, Ռեբեկան եւ Ռաքելն ամուլ էին (Ծնն. ԺԱ. 30, ԻԵ. 21, ԻԹ. 31): Ամուլ էր նաեւ Աստվածածնի մայրը՝ Աննան: Ամլությունն, ըստ հինկտակարանյան ընկալման, ինքնին «աստվածային պատիժ» է, որովհետեւ, ինչպես Եսայի մարգարեն է ասում, «ո՞չ ապաքէն զամուլն եւ զծննդականն ես արարի՝ ասէ Աստուած քո» (Ես. ԿԶ. 9): Միայն ճշմարիտ հավատքով նրանց որովայնը դառնում է պտղաբեր: Այս մասին Պողոս առաքյալը գրում է. «Հաւատովք եւ ինքն Սառա՝ որ ամուլն էր, զաւրութիւն առնլոյ զսերմն որդեծնութեան ընդունէր, եւ ի տարաժամ հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ զայն որ խոստացաւն» (Եբր. ԺԱ. 11):

ԺԴ. դարի նշանավոր վարդապետ Հակոբ Ղրիմեցին գրել է Տիրամոր վերափոխմանը նվիրված մի ճառ, որտեղ անդրադարձել է Աստվածամոր եւ Ռեբեկայի միջեւ կապին. «Նախ զի Ռեբեկայ յետ ամլութեան ծնաւ, իսկ Աստուածածինն ի չափ հասեալ նազելի անձինն ըստ բնութեան կարգի առանց յապաղելոյ ծնանի զԲանն Աստուած ի ԺԵ. (15) ամին: Երկրորդ՝ զի նա ծնաւ երկու որդիս ի միում արգանդի, որ սոսկ մարդ էին թէպէտ եղեն գլուխ երկու ազգաց մասնաւորաց, իսկ սա ծնաւ զՅիսուս միածինն, որ ոչ էր սոսկ մարդ, այլ Աստուած եւ մարդ ի յերկուց բնութեանց միաւորեալ եւ գլուխ ընդհանուր երկուց ազգաց, այսինքն՝ հրէից եւ հեթանոսաց»[8]: Շարականներում Ս. Աստվածածինը համարվում է նաեւ ամլութ-

7 Վենետիկ, ձեռ. 251, թ. 279ա:

8 «Ընտրանի Հայ եկեղեցական մատենագրության», աշխատ.՝ Պ. Խաչատրյանի եւ Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 716:

յան անեծքը վերացնող: Այս մասին կարդում ենք Ս. Գրիգոր Նյուսացու ճառում: Վերջինս բնության օրինակով ցույց է տալիս. «Եւ լուծանել զախտիցն ձմեռն, եւ զմեռելութիւն անդամոց վերստին առ կենդանականն կոչել զաւրութիւն: Եւ հրամայել բնութեան զմանկարարութեան ազդումն լուծանել զամլութիւնն ի ժամանակ ազանց անդամս: Զծերացեալ եղեգն փոխել դալարազգեստ ընթեռնուլ»[9]:

Աստվածաշնչյան հաջորդ անձը Դավիթ թագավորն է: Դավիթը սերում էր Հեսսեից: Այս մասին խոսում է Եսայի մարգարեն. «Եւ բղխեսցէ զաւազան յարմատոյն Յեսսեայ, եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի» (Ես. ԺԱ. 1): Ս. Գրիգոր Նյուսացին գրում է. «Ղուկաս պատմէ յաւետարանումն, զի նոյն Դաւթի զհարազատութիւնն: Եվ ասէ եւ Յովսէփ ի Գալիլէէ ի քաղաք Հրէաստանի որ կոչի Բեթղեհէմ. գրիլ հանդերձ Մարեմաւ խաւսեցելով նմա որ էր յղի՛. վասն լինելոյ նորա տանէ եւ ի հայրութենէ Դաւթի»[10]: Նույն արմատից էր սերում նաեւ Ս. Աստվածածինը: Մովսես Խորենացին իրավամբ գրում է. «Անթառամ ծաղիկ անդատապարտ շառաւիղ վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ զքեզ Եսայիաս կանխաւ վերագոչեաց եօթնարփեան շնորհաց հոգւոյն ընդունարան զոլ»[11]: Մեկ այլ շարականում կարդում ենք. «...զանթառամ ծաղկեցար զծաղիկ ի ժամու տալով զպտուղն»[12]: Աստվածածինն այստեղ ներկայացվում է որպես թագավորական պսակ, որից էլ ծնվում է մարդկաց հոգիների անմահ Թագավորը: Ընդհանրացնելով՝ կարելի է հիշատակել Ս. Գրիգոր Նյուսացու կոչը. «Եկա՛յք այսուհետեւ սիրելիք յառաջագոյն ասացելոցն յիշատակ վե՛ր ընթանալով զառ ի Յեսսեա՛յ զաւազանն զայսպէս առաւել անբնաբար շառաւեղեալն փառաւորեսցո՛ւք: Աւրհնեսցո՛ւք, բարեհամբաւեսցո՛ւք: Երանեսցո՛ւք»[13]: Հայ մատենագրության մեջ Աստվածամոր՝ Հեսսեից սերելու մասին խոսում է Պետրոս Սյունեցին. «Գաւազան ծաղկեալ, ուստի յարմատոյն Յեսսեայ բղխեալ յարաղալար ծաղիկն, որում յառաջացոյց յօրինակ քահանայապետին եղեւ ցուպ, որ ի խորանի անդ առժամայն բողբոջեալ սաղարթէր»[14]:

**Անսերմ եւ անարատ հղություն.** Աստվածածնի անսերմ եւ անարատ հղության վարդապետությունը մինչ օրս էլ համարվում է վիճահարույց[15*]: Հայ

9 ՄՄ. ձեռ. 4709, թ. 33բ-34ա:

10 Անդ, թ. 35ա:

11 «Զայնքաղ Շարական», Մշգ. ԲՁ «Անթառամ ծաղիկ», էջ 354:

12 Անդ, Մշգ. ԴԿ «Աստուածածին Սուրբ Կոյս», էջ 22:

13 ՄՄ. ձեռ. 4709, թ. 35ա:

14 «Ընտրանի Հայ եկեղեցական մատենագրության», էջ 167:

15* Համաձայն Պիոս Թ. Պապի 1854 թվականի կոնդակի՝ Կաթոլիկ Եկեղեցին «անարատ հղության» մասին դավանում է. «Երանելի Կոյսն Մարիամ, իր յղութեան առաջին վայրկեանէն իսկ, Ամենակալ Աստուծոյ մասնայատուկ շնորհքով եւ առանձնապարգեւով, մարդկային ցեղին Փրկիչ Յիսուս Քրիստոսի արժանիքներուն նախատեսութեամբ, զերծ մնաց սկզբնական մեղքին ամէն արատէ»: (**Պիոս Թ.**, Կոնդակ ''Ineffabilis Deus'', DS 2003): Այսինքն՝ Կաթոլիկ Եկեղեցին ընդունում է, որ Աստվածամայրն անմեղ եւ անարատ էր դեռեւս Աննայի արգանդում հղանալուց: Իսկ Արեւելյան ավանդության մեջ Եկեղեցու հայրերը Ս. Աստվածամորն անվանում են «Ամենասրբուհի» (Παναγία) տիտղոսով, այսինքն՝ բնութագրվում է որպես «զերծ՝ մեղքի ամէն արատէ, քանի որ ան շաղուած է Սուրբ Հոգիէն եւ կազմուած է իբր նոր արարած»: (տե՛ս «Քրիստոնէական Կաթողիկէ

իրականության մեջ անսերմ հղության մասին գրում է Ս. Գրիգոր Տաթեւացին. «Բայց միայն փրկիչն մեր Քրիստոս էր ազատ ի սկզբնականէն: Որոյ պատճառ է, զի ո՛չ ի սերմանէ՝ այլ ի մաքուր արենէ կուսին էառ մարմին»[16]:

Հայ Եկեղեցին ծիսապաշտամունքային երգերի՝ շարականների, ինչպես նաեւ եկեղեցական հայրերի թողած հարուստ ժառանգության շնորհիվ դեռեւս Դ. եւ հաջորդ դարերում արդեն պատասխանել է խնդրո առարկա հարցին: Մարիամը կոչված էր հղանալու Աստվածորդուն, որի մեջ պիտի բնակվեր «լրումն Աստուածութեան մարմնապէս» (Կող. Բ. 9): Ս. Աստվածածնի այն հարցին. «Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ» (Ղուկ. Ա. 34), Գաբրիել ավետաբեր հրեշտակապետը տվեց աստվածային պատասխանը. «Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո» (Ղուկ. Ա. 35): Այս վկայությունն արտացոլված է նաեւ շարականում. «Ի Հոգւոյն Սրբոյ յղացեալ զԲանն Աստուած մարմնով ծնար»[17]: Երբ մահկանացու կնոջ հղությունը համեմատում ենք հավերժ կույսի հղության հետ, նկատում ենք երկու չձուլվող իրականություն: Եթե կնոջ հղությունը բնական էր եւ երկրից, Տիրամոր հղությունն ի վերուստ էր եւ երկնքից: Կնոջ հղության պարագային կիրառելի է սերմը, իսկ Ս. Կույսի հղությունն անսերմնական էր. Ս. Գրիգոր Նյուսացին հաստատում է. «...զծննդականութիւն Ս. Կուսին Ս. Հոգին շնորհեր»[18]: Շարականագիրն այս մասին ասում է. «...անսերմնապէս փղայացաւ յորովայնի քում եւ ծնաւ առ ի քէն մարմնացեալ Աստուածն»[19]: Անսերմ հղության մասին վարդապետությունը այլաբանորեն ներկայացնում է Դանիել մարգարեն. «...զի ի լեռնէն հատաւ վէմն առանց ձեռին» (Դան. Բ. 45), որ այսպես է մեկնաբանել Վարդան Արեւելցին. «Վէմն հատեալ առանց ձեռին» չվայելէ ի մարմնաւոր ոք հանել, բայց միայն զՏէրն ի կուսական յարգանդէ առանց ձեռին, որ է առանց սերման, որ ձեռն տայ յարգանդի կնոջ յղութեան, որում չեղեւ կարաւտ Մայրն Էմմանուէլի...»[20]: Մարգարեական այս խոսքերն իրենց արձագանքն են գտել մեծացուցեներում, օրինակ՝ «Ի լեռնէ վէմն առանց ձեռին հատեալ Դանիէլ զուշակեաց զանսերմն զծնունդ քո հարսն երկնաւոր մայր»[21]: Ինչպես Ս. Բարսեղ Կեսարացին նշում է. «Նախ քան զգալն առ միմեանս զտաւ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ» (հմմտ. Մատթ. Ա. 19): Զերկուս եգիտ Յովսէփ եւ զյղութիւն, եւ զպատճառն՝ եթէ ի Հոգւոյն Սրբոյ»[22]: Այստեղ հարց է ծագում՝ ինչո՞ւ Աստծո նախախնամությամբ Հովսեփը կնության

Եկեղեցւոյ», Վատիկան, 1997, էջ 199): Այսինքն՝ ի հակադրություն կաթոլիկների՝ արեւելյաններն ընդունում են Ս. Կույսի՝ Ս. Հոգով մաքրագործվելու (սկզբնական մեղքից սրբվելու) մասին վարդապետությունը:

16 «Գիրք հարցմանց երիցս երանեալ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1729, էջ 568:

17 «Զայնքաղ Շարական», Մծց. ԴՀ «Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալ», էջ 151:

18 ՄՄ. ձեռ. 4709, թ. 35բ:

19 «Զայնքաղ Շարական», Մծց. ԳՀ «Անսկզբնական Բանին Հօր», էջ 30:

20 **Վարդան Արեւելցի, Յովհաննէս Ծորմորեցի, Թովմայ Մեծոփեցի**, Մեկնութիւնք մարգարէութեանն Դանիէլի, աշխատ.՝Մ. Արաբյանի, Գ. Ներսիսյանի եւ Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 50, 190:

21 «Զայնքաղ Շարական», Մծց. ԳԿ «Ամենագովելի եւ քան զերկինս», էջ 27:

22 Վենետիկ, ձեռ. 251, թ. 277բ:

առաւ Ս. Կոյսին: Այս հարցի պատասխանը դարձյալ գտնում ենք Ս. Բարսեղի մոտ. «Եւ կոյս, եւ առն խաւսեցեալ. պատկանաւորք առ տնաւրէնութեանն սպասաւորութիւն, որպէս զի եւ կուսութիւնն պատուեսցի, եւ ամուսնութիւն մի՛ յոռասցի: Քանզի կուսութիւնն, որպէս պատկանաւոր առ սրբութիւնն ընտրեցաւ. իսկ առնխաւսութիւնն՝ սկզբունք ամուսնութեանն առան: Միանգամայն՝ որպէս զի եւ վկայ ընտանի մաքրութեանն Մարիամայ եղիցի Յովսէփ, եւ ի զրպարտողս մի՛ մատնիչ նորին՝ որպէս պղծեցելոյ զկուսութիւնն զխաւսնայրն ունէր վարուց պահապան»[23]: Ինչո՞ւ հենց Ս. Կույս Մարիամն ընտրվեց. «Վասն զի համապատիւ մաքրութեանն Մարիամայ ոչ ոք ունէր՝ ըստ այնմ ժամանակի ազգ մարդկան, որպես առ ի յընդունել զազդումն Հոգւոյն Սրբոյ, սակս այսորիկ յառաջահաս եղեալ ի ձեռն առնխաւսութեան՝ ընտրեցաւ երանելի Կոյսն, ոչինչ կուսութեանն յառնխաւսութենէ վնասեալ»[24]: Ս. Գրիգոր Նյուսացին լրացնում է Ս. Բարսեղ Մեծին՝ ասելով. «Քանզի յամենա՛յն ազգաց նա միայն Սուրբ Հոգով եւ մարմնով եղեւ: Զի նա միայն կրեաց զայն որ կրէ զամենայն բանիւ զաւրութեա՛մբ իւրով»[25]: Անսերմ հղությունն «անտանելի է խորհուրդ եւ ահաւոր»[26]: Այս մասին ընթերցում ենք շարականում. «Անարատ կոյս աստուածածին սրբուհի եւ մայր քրիստոսի յարգանդի տարար զանտանելին ամենեցուն» [27]: Մեկ այլ մեծացուցեում կարդում ենք. «...զանշոշափելին յէից ի գիրկս քո բարձեալ դիեցուցեր կաթնասուն»[28]: Ս. Գրիգոր Աստվածաբանը նկարագրում է, թե ինչպես Ս. Կույսն իր որովայնում կրեց «անտանելին». «Եւ անտանելին տարեալ լինի միջոցաւ հոգւոյ աստուածութեանն, միջնորդելով եւ մարմնոյ թանձրագունի»[29]: ԱՁ «Որ զհրեշտակային» մեծացուցեում Ս. Կույսի անարատ հղության վարդապետությունը բացատրվում է վառվող մորենու օրինակով. «Որ զհուրն Աստուած յորովայնի քում կրեցեր անկիզելի մորենի»[30]: Այս տողերի բացատրությունը գտնում ենք մեկ այլ մեծացուցեում . «Անապական տաճար եւ մորենի անկիզելի որ անշէջ հուր աստուածութեանն ի քեզ տարեալ կրեցեր որով բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց»[31]: Այս մեծացուցեներում Ս. Աստվածածինը բնորոշվում է որպես անկեզ, այսինքն՝ չմոխրացող մորենի, իսկ հուրն Աստվածորդին է, որը վառում է մեր մարդկային բնության մեջ առկա մեղքը եւ այն ի սպառ վերացնում. «Հուրն կենդանի որ մորենին վառեցաւ զոր անվնաս յարգանդի քում կրեցէր եւ ծնար Աստուած եւ մարդ»[32]:

23 Անդ, թ. 276ա-276բ:

24 Անդ, թ. 277ա:

25 ՄՄ. ձեռ. 4709, թ. 36ա:

26 Անդ, թ. 33բ:

27 «Զայնքաղ Շարական», Մծգ. ԴՁ «Անարատ կոյս Աստուածածին», էջ 148:

28 Անդ, Մծգ. ԱՁ «Որ զհրեշտակային», էջ 100:

29 «Գիրք եւ ճառ հոգեշահ», Կ. Պոլիս, 1722, էջ 21:

30 «Զայնքաղ Շարական», Մծգ. ԱՁ «Որ զհրեշտակային», էջ 100: Հայ մատենագրության մեջ Տիրամոր՝ «անկիզելի մորենի» բնորոշումը նկարագրված է Պետրոս Սյունեցու նշանավոր ներբողում. տե՛ս «Ընտրանի Հայ եկեղեցական մատենագրության», էջ 167:

31 Անդ, Մծգ. ԳԿ «Աստուածածին խորան լուսոյ», էջ 18:

32 Անդ, Մծգ. ԴԿ «Աստուածածին սուրբ կոյս», էջ 162-163:

Այս ընկալումն առկա է եկեղեցական հայրերի երկերում: Ս. Գրիգոր Նյուսացին մեկնում է սուրբգրային այս դրվագը (Ելից Գ. 2). «Եթէ Մարիամ զհուրն իսկ ապրուածութեան քո բերել զիա՞րդ հանդուրժեսցի: Աթոռ քո ասէ կիզո՛ւ ի շրջափայլութենէ ճառագայթիցդ. եւ զքեզ կարո՞ղ զոյ տանել ամենակիզել ի Կոյսն: Այլ թէ վնասեաց ասէ հուրն յանապատին զմորենին, վնասեսցէ ամենայն իրաւք զՄարիամ իմ զալուստն: Իսկ եթէ այն հուր որ ստորադրեաց զապրուածային հրոյն իմոյ զգալուստն յերկնից ոռոգեաց զմորենին եւ ո՞չ կիզեաց. զիա՞րդ եւք ասասցես յաղագս ճշմարտութեանս, որ ո՛չ բոցով հրոյ. այլ ի ձեռն անձրեւի՛ իջանէ»[33]՝ ցույց տալով, որ Ս. Կույսի արգանդում հղանում էր կատարյալ Աստվածամարդը. «Որպէս մարգարիտ յերկուց բնութեանց ի փայլակնէ՛ եւ ի ջրոյ անյայտ նշանակաց ծովու յառաջ գայ, ա՛յն պէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս անշփոթաբար, եւ յանեղաբար, ի մաքո՛ւր եւ յանարատ Կուսէն յառաջ գայ, իւր կատարեալ ապրուածութեամբն, եւ կատարեալ մարդկութեամբ»[34]: Հայ եկեղեցական մատենագրության մեջ «անկիզելի մորենի» համաբանությանը անդրադարձել է Պետրոս Սյունեցին. «Ուրա՛խ լեր, Մարիամ, Մորենի սխրալի, որ ապրուածութեանն հրով վառեալ ոչ այրեցար»[35]: Արդ, հայ քրիստոնեական վարդապետության մեջ Աստվածամոր անարատ եւ անսերմն հղության դոգման մնում է մեկնելի ու անվիճելի խորհուրդ: Դրա վառ վկայությունն արտացոլված է շարականներում եւ հայրաբանական գրականության մեջ:

**Անապական ծնունդ.** «Մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով»[36]. Նիկիական հանգանակի այս տողերը, որ պատմում են Աստվածորդու աշխարհ գալու մասին, շեշտադրում են Քրիստոսի ծնունդի եզակիությունը: Հիմնվելով Ս. Գրքի վրա. «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի եւ կոչեսցես զանուն նորա Էմմանուէլ» (Ես. Է. 14)՝ Ս. Գրիգոր Աստվածաբանն ի լուր աշխարհի ազդարարում է. «Այժմ Աստուծոյ յայտնութեանս փօն է. քանզի երեւեցաւ Աստուած մարդ ծնունդեամբ»[37]: Եթե կանայք նախամորից՝ Եւայից ժառանգած երկունքի ցավերով են լույս աշխարհ բերում իրենց զավակներին, ապա Ս. Աստվածածինը առանց երկունքի ցավերի ծնեց մարդկության Փրկչին, որովհետեւ «եւ որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, եւ Որդի Աստուծոյ կոչեսցի» (Ղուկ. Ա. 35): Այս է հաստատում նաեւ Ս. Բարսեղ Կեսարացին. «Քրիստոսի ծնունդ՝ իրականն եւ առաջինն եւ հատուկ իրոյ ապրուածութեանն»[38]: Աստված ուղարկեց իր Միածնին՝ «մարմնանալ ի սուրբ կուսէն եւ անարատ ծնանիլ յորովայնէ անապական»[39]: Հայրախոսական գրականության

33 ՄՄ. ձեռ. 4709, թ. 33ա:

34 Անդ, թ. 35բ:

35 Տե՛ս «Ընդրանի Հայ եկեղեցական մատենագրության», էջ 167:

36 «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից Եկեղեցեաց Հայաստանեայց», Ամստրդամ, 1796, էջ 365-366:

37 «Գիրք եւ ճառ հոգեշահ», էջ 9:

38 Վենետիկ, ձեռ. 251, էջ 271ա:

39 «Ձայնքաղ Շարական», Մծց. ԲՁ «Զքեզ հայր յառաջ քան զհաւիտեանս», էջ 251:

մեջ Ս. Աստվածածնի անապականության մասին խոսում է երանելի Իրենիոս Լուգդունացին. «Եկն Որդին Աստուծոյ եւ զգեցաւ մարմին անապական՝ յանապական Կուսէն Մարիամայ»[40]:

Միայն Ս. Կույսն էր ճշմարտապես ցնծում. «Ուրա՛խ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ» (Ղուկ. Ա. 28), որովհետեւ, ինչպես Ս. Գրիգոր Նյուսացին է շեշտում իր ճառում, «ընդ քե՛զ է աստուածային շնորհն. եւ որպէս ինքն գիտէ տաղաւարեա՛ց: Ընդ աղախնոյդ, Տէ՛րն փառաց: Ընդ զեղեցկիդ, զարմանալին զեղեցկութեամբ քան զորդիս մարդկան: Ընդ անարատիդ, որ սրբէ՛ զընթանուրս: Ընդ քեզ Աստուած, եւ ի քէ՛ն Աստուած, եւ կատարեալ մարդ»[41]: Ինչպես շարականում է ասվում. «Անարատ տաճար տնօրէնութեան կոչեցար Հոգւոյն Սրբոյ»[42]: Լինել Ս. Հոգու անարատ տաճար նշանակում է ընդունել Ս. Հոգու երկնառատ շնորհները: Ս. Հոգու յոթնալույս շնորհներով էր զարդարված Ս. Կույսը: Այս մասին ընթերցում ենք Եսայիի մարգարեությունում. «Եւ հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստութեան եւ հանճարոյ, Հոգի խորհրդոյ եւ զօրութեան, Հոգի գիտութեան եւ աստուածպաշտութեան. Եւ լցցի զնա Հոգի երկիւղի Աստուծոյ» (Ես. ԺԱ. 3-4): Մովսես Խորենացին մեծացուցեում Ս. Կույսին բնութագրում է որպես «ընդունարան եօթնարփեան շնորհացն»[43]:

Ս. Աստվածածինը մեծացուցեներում անվանվում է «արեւելք արեգական արդարութեան»[44], որից ճառագում՝ ծնվում է անճառ Լույսը՝ Հիսուս Քրիստոս՝ լուսավորելով համայն հավատացյալ ժողովրդին. «Զքեզ Աստուածածին աղբիւր անսպառ լուսոյն որ լուսաւորէ զհաւատացեալս»[45]: Շարականագիրը ասում է՝ «Մայր եւ կոյս եւ բնակարան աստուածային ներմարդութեան»[46], ապա շարունակում. «Ծնունդ Հօր եւ հին աւուրցն անժամանակ յաւիտենից ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ եւ Հօրէ ոչ մեկնեցաւ»[47]: Մակդիրները, որոնք բնութագրում են Ս. Աստվածածնին, նաեւ Ս. Գրիգոր Նյուսացին է օգտագործում իր ճառում. «Ե՛րթ առ բանաւոր դրա՛խտն իմ: Ե՛րթ առ արեւելեան դո՛ւռն իմ: Ե՛րթ առ բանիս իմոյ արժանաւո՛ր բնակարանն: Ե՛րթ երկրորդն ի վերայ երկրի երկի՛ն: Ե՛րթ առ թեթեւ ամպն, զգացո՛յ նմա զիմոյ գալստեանս տաղտարափ: Ե՛րթ առ պատրաստեալն ինձ սրբութիւն: Ե՛րթ առ առագաստն մարդեղութեա՛ն իմոյ: Ե՛րթ առ սուրբ հարսնարանն իմ: Խաւսեա՛ յականջս բանաւոր տապանակին. պատրաստել

40 «Գիրք Պարապմանց», էջ 458:

41 ՄՄ. ձեռ. 4709, թ. 35բ:

42 «Զայնքաղ Շարական», Մծց. ԱՁ «Որ զբանն Աստուած», էջ 102:

43 Անդ, Մծց. ԴՁ «Որ ի բարձրութիւնս», էջ 14:

44 Անդ, Մծց. ԳԿ «Աստուածածին խորան լուսոյ», էջ 28, Մծց. ԴԿ «Ընդքեզ Աստուածածին աղբիւր», էջ 436, Մծց. ԴԿ «Աստուածածին ամպ լուսաւոր», էջ 359, Մծց. ԴՁ «Մայր լուսոյ Մարիամ», էջ 394, Մծց. ԱԿ «Աստուածածին մայր լուսոյ», էջ 279, Մծց. ԴՁ «Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք», էջ 147:

45 Անդ, Մծց. ԴԿ «Զքեզ Աստուածածին աղբիւր», էջ 436:

46 Անդ, Մծց. ԲՁ «Զքեզ կոյս եւ մայր», էջ 120:

47 Անդ:

ինձ զմո՛ւտ լսելութեանն»[48]: Աստվածածինը մեծացուցեներում հանդես է գալիս որպես աստվածընկալ տաղավար, մարգարեների ժողովարան, յոթնարփյան շնորհների ընդունարան, նոր խառնարան, աստվածային բոցի վառարան, մեղքի փշերից զերծ անդաստան, տուն մարդեղության, Հոգու տաղավար եւ անարատ տաճար, խորհրդավոր խորան, անճառ եւ անսկիզբ Բանի բնակարան եւ այլն: Ս. Կույսն այն սուրբ բնակատեղին էր, որտեղ պետք է ժամանակավոր բնակություն հաստատեր Աստված: Համաձայն Ս. Գրքի՝ Աստված լինելով Սուրբ, բնակվում է միայն սուրբ վայրերում: Այս պարագային Աստվածածինն է Տիրոջ «Սրբութիւն սրբոցը»: Սա ինքնին վկայում է Ս. Մարիամի ընտրյալ լինելու մասին, որի՝ Սուրբ Հոգով մաքրված արգանդից ծնվում է Աստվածորդին: Ընդհանրացնելով՝ տեսնում ենք, որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անարատ ծնունդը փրկություն է ողջ մարդկության համար:

**Միշտ Կույս.** Ս. Աստվածածնի կուսության մասին են վկայում մեծացուցեները: Մովսես Խորենացու Վարդանանց կանոնում զետեղված հեղինակային ԴԿ «Զքեզ Աստուածածին աղբիւր» մեծացուցեն փառաբանում է. «Դու պարծանք կուսութեան մարդկան»[49]: Կուսության միակ եւ կատարյալ մարմնացումը Ս. Աստվածամայրն է: Նրա կուսությունը անարատ է եւ անխախտ[50]: Զարեհ արք. Ազնավորյանը գրում է. «Մեր Եկեղեցւոյ տեսակէտը այն է՝ որ Սուրբ Կոյս Մարիամ կոյս մնաց մնայուն կերպով, մինչեւ իր կեանքին աւարտը: Բոլոր Ուղղափառ Եկեղեցիները նոյն այս տեսակէտը ունին: Յիշենք նաեւ որ յունարէն բնագիրը «կոյս Մարիամ» ըսելու փոխարէն, կ՚ըսէ՝ «մշտակոյս Մարիամ»: Մշտակոյս, կը նշանակէ՝ միշտ կոյս: Ակնարկութիւնը իր յաւերժական կուսութեան է»[51]: Թերեւս Ս. Թովմաս առաքյալն է առաջին անգամ Աստվածածնին անվանել է «միշտ Կոյս» (Αειπαρθένος)[52], իսկ հայրաբանական գրականության մեջ՝ Ս. Աթանաս Ալեքսանդրացին: Ս. Աթանասի՝ Տիրամոր հավերժ կուսության մասին ուսմունքին առաջինն արձագանքել է Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին. «...անհոսանուտ մարմնաւորութիւն Էմմանուէլի որ ի Մարիամայ Աստուածածնէ՝ անմեղանչականէ: Վասն զի եւ յանամուսնական որովայնէ մշտակուսէն. վասն այսորիկ եւ անապական խոստովանելի է. զի ամենայն ապականութեանց եւ մեղաց բաց բարձիչ է»[53]: Աստվածածնի կուսության մասին վարդապետությունը աղավաղվել է տարբեր ժամանակներում: Այս մասին Ս. Գրիգոր Նյուսացին ասում է. «Եւ վասն զի քահանայքն որպէս զգաստի՛ յաւրինեցին զՄարիամ Յովսեփու եւ աւանդեցին նմա ժամանակ հարսնեաց մնալոյ»[54]: Տիրամոր կուսութ-

48 ՄՄ. ձեռ. 4709, թ. 34ա:

49 «Զայնքաղ Շարական», Մծց. ԴԿ «Ընդքեզ Աստուածածին աղբիւր», էջ 436:

50 Անդ, Մծց. ԲՋ «Սուրբ եւ Աստուածածին Մարիամ», էջ 120:

51 **Զարէհ արք. Ազնաւորեան**, Մեկնութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հաւատամքին, Հալէպ, 2008, էջ 187:

52 «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից», էջ 219:

53 «Գիրք Պարապմանց Սրբոյն Կիւրղի Եպիսկոպոսի, Աղէքսանդրու Հայրապետի», Կ. Պոլիս, 1818, էջ 459:

54 ՄՄ. ձեռ. 4709, թ. 34բ:

յան վերաբերյալ սխալ ընբռնումը հեպեւանք էր ավեպարանական՝ «Եւ ոչ գիպէր զնա, մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ» (Մատթ. Ա. 25) հապվածի ոչ ճիշպ մեկնության: «Մինչեւ» բառը բացապրվում է երկու իմասպով. ա) ցույց է պալիս նախկին վիճակին հակառակ գործողության շարունակություն, բ) որեւէ գործողություն չի կապարվել մինչ նշված պահը եւ հեպագայում էլ չի կապարվելու: Ասպվածաշունչ մապյանում «մինչեւ» բառն օգպագործված է այս երկու իմասպով: Բարսեղ Կեսարացին բացապրում է վերոնշյալ «մինչեւ» բառի իմասպն ու նշանակությունը. «Եթէ «մինչ»դ բազում անգամ ժամանակի իմն թուի սահման զուշակել, բայց ըսպ ճշմարպութեանն զանորիշ իրս ցուցանէ, որպէս է ասացեալ ի Տեառնէ. «Միաւասիկ ես ընդ ձեզ եմ մինչեւ ի կապարածն յաւիպենիս» (Մատթ. ԻԸ. 20): Քանզի ոչ եթէ յեպ յաւիպենիս այսորիկ ոչ է հանդերձեալ լինել ընդ սուրբս իւր Տէրն, այլ խոսպումն հանդերձելոյն»[55]: Ինչ վերաբերում է «անդրանիկ» բառին, ապա «որ առաջին բանայ զարգանդն, անդրանիկ անուանի»[56]: Ավանդության համաձայն՝ «Եւ՛ ծնանել կուսին, եւ՛ զկուսութիւնն ոչ ապականել»[57], քանի որ «ցիանապազ կոյս մնաց Սուրբն Մարիամ»[58]:

Առաջնորդվելով Եսայի մարգարեի խոսքերով՝ Ս. Գրիգոր Նյուսացին եւս խոսում է Ս. Ասպվածածնի կուսության մասին. «Լո՛ւր զի՞նչ յաղագս առնս այսորիկ եւ կուսիս մարգարէն ասէ: «Տացի թուխթս այս կնքեալ առն որ գիպիցէ՛ զդպրութիւնն» (հմմտ. Ես. ԻԹ. 12): Թուխթ կնքեալ ամենայն իրաւք անշաղախ Կո՛յսն է»[59]: Նյուսացին Տիրամոր կուսության վերաբերյալ ունի մեկ այլ նկարագրություն. «Արի՛ Տէր ի հանգիսպ քո, դու եւ պապանակ սրբութեան քո» (Սաղմ. ՃԼԱ. 8): Քանզի պապանակ ճշմարպութեան Սուրբ Կո՛յսն է: Ներքոյ եւ արպաքոյ ոսկիացեալ, եւ զբոլոր զանձն սրբութեան ընկալեալ»[60]: Այս ամենն ի նկապի առնելով՝ շարականագիրն ասում է. «...յեպ ծննդեան մնալով կոյս»[61]: ԴՁ «Ասպուածածին գերագոյն երկնից» մեծացուսցեում խոսվում է անարապ եւ անխախպելի կուսության մասին՝ հիմնվելով Եզեկիել մարգարեի խոսքերի վրա (Եզեկ. ԽԴ. 1-2). «Դուռն փակեալ զքեզ Եզեկիէլ յառաջագոյն ծանոյց կոյս անարապ ընդ որ եմուպ անպես յէից բանն անմարմին որ ի հօրէ եւ ել մարմնով անխախպելի մնալով կուսութեանդ»[62]:

Տիրամոր «մշպակույս» լինելու մասին վարդապեպությունն անքակպելիորեն կապված է նրա «սրբության» գաղափարի հետ: Կուսության եւ սրբության անբաժանելիության մասին հայ եկեղեցական մապենագրության մեջ խոսում է

55 Վենեպիկ, ձեռ. 251, թ. 281ա-281բ:
56 Անդ, թ. 281բ:
57 Անդ, թ. 282ա:
58 Անդ, թ. 281բ:
59 ՄՄ. ձեռ. 4709, թ. 34բ:
60 Անդ, թ. 35ա:
61 «Զայնքաղ Շարական», Մծց. ԳԿ «Ամենագովելի եւ քան զերկինս», էջ 27:
62 Անդ, Մծց. ԴՁ «Ասպուածածին գերագոյն երկնից», էջ 151-152:

Ս. Գրիգոր Տաթեւացին. «...զի զալ Հոգւոյն Սրբոյ պատճառ էր կրկին ներգործութեան, այսինքն՝սրբութեան արմատոյ մեղաց եւ պտղաբերութեան, կուսածին զաւակին՝ ծնանիլ եւ կոյս մնալ յետ ծննդեանն»[63]: Աստվածաբանական գրականության մեջ Տիրամոր սրբության վերաբերյալ վարդապետությունը հայտնի է «կատարսիսի տեսություն» (հուն. kaqarsij բառից, թարգմանաբար նշանակում է մաքրագործում) անվամբ: Այս տեսությունն առաջադրել է Ս. Գրիգոր Աստվածաբանը՝ ընդգծելով, որ Քրիստոս ծնվել է «Սուրբ Հոգիին կողմէ նախամաքրուած Կոյսէն, մարմնով եւ Հոգիով»[64]: Նախամաքրված (προκαθαρθέιτης) եզրը, հակառակ իր երկիմաստությանը, Հայ Եկեղեցու վարդապետության մեջ միանշանակ մեկնաբանության է արժանացել: ԲԿ «Որ ողորմեցար ի մեղս» մեծացուցեի երրորդ տան մեջ կարդում ենք. «Որ մաքրեցէր Հոգիդ Սուրբ՝ զսիրտ եւ զարգանդ Մօր քո փառակիցն»[65]: Հիմք ընդունելով այս վկայությունը՝ կարելի է ենթադրել, որ Հայոց Եկեղեցին, ցուցաբերելով պատշաճ զգուշավորություն, «նախամաքրուած» եզրը բացառապես կապել է Սուրբ Հոգու ներգործումից եւ Աստվածածնի աղամական մեղքից մաքրագործումից հետո Բանի անապական մարմնացումը նախապատրաստելու իրողության հետ[66]:

**Եւա - Մարիամ (անեծք - շնորհ, դատապարտության մայր - փրկության մայր).** Խոսելով արարչագործության, չարի գոյության եւ մեղանչումի մասին՝ ինքնաբերաբար մոտենում ենք մեր նախածնողներին: Անհնազանդությունը հանգեցրեց մեղքի: Ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Եւ Ադամ ոչ պատրեցաւ՝ այլ կին պատրեցաւ եւ յանցեաւ» (Ա. Տիմ. Բ. 14): Մեր նախամայր Եւան, որ Ադամի կողմից կոչվեց կյանք, «զի նա է մայր ամենայն կենդանեաց» (Ծնն. Գ. 20), ինչպես շարականագիրն է նկատում. «Կնիք դատապարտութեան եւ մեղուցեալ մայր գլորեալ»[67]: Այս մասին Ս. Գրիգոր Նյուսացին գրում է. «Եւ ուստի սկիզբն ելիցն ունէր մահ. անդուստ կեանք զմուտս կենդանութեան՝ն ճարտարապետեցին: Ի ձեռն կնոջ հոսեցան ի մեզ յոռիքն, ի ձեռն կնոջ առ բերկրեալդ. զի ողորմեցայ ես Եւայի գլորեցելոյն»[68]: Հետեւյալ հաստատումը գտնում ենք նաեւ Ս. Գրիգոր Նազիազանցու երկում. «Եւ եթէ ճաշակումն դատապարտեաց, որչա՛փ եւս առաւել Քրիստոսի չարչարանքն արդարացուցին»[69]: Այս տողերը մեկնում է Պողոս առաքյալը. «...որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս եւ միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ արդարութիւն կենաց» (Հռոմ. Ե. 18): Իսկ Բարսեղ Մեծն այս կապակցությամբ

63 «Գիրք Հարցմանց», էջ 463:

64 **Թամար Տասնապետեան**, Գրիգոր Նարեկացի «Ներբող Աստուածածնին», «Հանդէս ամսօրեայ», 1989, էջ 132:

65 «Զայնքաղ Շարական», Մծց. ԲԿ «Որ ողորմեցար ի մեղս», էջ 124:

66 Այս հարցին անդրադարձել է Հ. Քյոսեյանը «Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության» աշխատասիրության մեջ (էջ 234-236):

67 Անդ, Մծց. ԴԿ «Աստուածածին եւ սրբուհի», էջ 164:

68 ՄՄ. ձեռ. 4709, էջ 33ա-33բ:

69 «Գիրք եւ ճառ հոգեշահ», էջ 9:

գրում է. «Այսաւր (մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան օրը) լուծաւ դատապարտութիւն Ադամայ...վասն զի երկնայնումն շարամերձեալ յերկինս համբառնաս»[70]: Քրիստոսի ծննդյան խորհուրդը նկարագրված է ԱԿ «Որ զկեանք անմահարար» մեծացուցեում. «Որ զկեանք անմահարար մահկանացու բնութեամբս ի քեզ կրեցէր Սուրբ կոյս Մարիամ. որով մեռեալքս որք յադամայ կենդանացաք յուսով յարութեան»[71]: Այս տողերը հիմնված են Ս. Գրքի եւ Ս. Գրիգոր Աստվածաբանի խոսքերի վրա. «Եւ որպէս Ադամաւ մեռաք, նոյնպէս եւ Քրիստոսիւ կեցցուք: Ընդ Քրիստոսի ծնեալք եւ խաչակիցք լեալք, ընդ նմին թաղեալք եւ ընդ նմին յարուցեալք»[72]:

Մեղքը տիեզերական բնույթ ունի. այն տարածվել է ոչ միայն մարդկության, այլ նաեւ բնության վրա: Այն, ինչ նոր էր, վերածվեց հնի: Շարականագիրն ասում է. «Ստեղծողին մայր եւ հնութեան կերպի նորոգողին»[73]: Ուստի հայտնի է դառնում, որ հնացածը վերածնվելու՝ նորանալու հնարավորություն ունի: Հնացած, խամրած պատկերի մասին հիմնարար բացատրություն է տալիս Ս. Գրիգոր Նյուսացին. «Մե՛ղք ասէ հնացուցին ըստ պատկերի իմոյ ստեղծեալն: Փտեցին զստեղծուածն ձեռաց իմոց: Խամրացուցի՛ն զզեղեցկութիւնն զոր ստեղծի»[74]: Այս մասին գրում է նաեւ Ս. Բարսեղ Կեսարացին. «...զհին մարդն ի բաց ընկելով, զնորն զգենուցումք»[75]:

Մեծացուցեն շարականի՝ «Յաւուր ծննդեան Սրբուհւոյ կուսին յոր օրհնեցայք յանիծից»[76] տողերը պատմում են անեծքի մասին, որի կրողն էր մեր նախամայր Եւան: Այդ անեծքը ժառանգաբար փոխանցվում է սերնդեսերունդ. «Ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն, յղացաւ զցաւս եւ ծնաւ զանիրաւութիւն» (Սաղմ. Է. 15): Իբրեւ «ասպվածային պատիժ»՝ «տրտմութեամբ ծնցիս որդի» (Ծնն. Գ. 16), երկունքի ցավերով պետք է զավակներ ծներ: Սակայն Ս. Կույսը՝ իբրեւ «անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց»[77], ինչպես նաեւ «լուծիչ երկանց»[78], Փրկչի ծնունդով օրհնություն բաշխեց ողջ աշխարհին: Իբրեւ Բանն Աստծո տաճար՝ Ս. Աստվածածինը, ինչպես շարականագիրն է բնութագրում, եղավ «բարձող տրտմութեան նախամօրն Եւայի»[79]: Այսինքն՝ եթե Եւայի պատճառով անեծք էր հեղվում աշխարհի վրա, ապա Ս. Աստվածածնի միջոցով անեծքը վերափոխվեց օրհնության: Ս. Գրիգոր Աստվածաբանը Քրիստոսի ծնունդի մասին ասում

70 ՄՄ. ձեռ. 251, էջ 287ա-287բ:
71 «Զայնքաղ Շարական», Մծց. ԱԿ «Որ զկեանք անմահարար», էջ 113:
72 «Գիրք եւ ճառ հոգեշահ», էջ 9:
73 «Զայնքաղ Շարական», Մծց. ԳՋ «Լոյս լուսոյ մայր», էջ 191:
74 ՄՄ. ձեռ. 4709, թ. 34ա:
75 «Գիրք եւ ճառ հոգեշահ», էջ 9:
76 «Զայնքաղ Շարական», Մծց. ԴՋ «Նոր Սիոն ծնեալ», էջ 10:
77 Անդ, Մծց. ԲԿ «Սիւն լուսոյ եւ ամպ հովանի», էջ 255:
78 Անդ, Մծց. ԱԿ «Ով զերսահրաշ ծաղիկ», էջ 321:
79 Անդ, Մծց. ԲԿ «Ուրախ լե՛ր մայր լուսոյ», էջ 125:

է. «Դարձեալ խաւար լուծանի. դարձեալ լոյս հաստատի»[80]: Այստեղ խավարը խորհրդանշում է մեղքը, իսկ լույսը՝ արեգակից՝ Ս. Մարիամից ճառագող Քրիստոսն է, որ խավարի մեջ լուսավորում է՝ առանց խավարը ճանաչելու (հմմտ. Յովհ. Ա. 5): Այս առումով հատկանշական է Հակոբոս առաքյալի Ընդհանրական նամակը, որտեղ գրված է. «...ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի, եւ մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին» (Յակ. Ա. 15): Չարակերպ օձը խաբեց եւ գայթակղեց նախամորը: Այս մասին Ս. Գրիգոր Նյուսացին գրում է. «Ո՞չ որպէս առաջին կոյսն եւ Աստուծոյ. միայն պարտելով ի դրախտին, թո՛յլ խորհրդովք, եւ անքննաբար զառ ի սկզբնաչար ածին ընկալաւ զբանն ապականեաց զստորին խորհուրդս. յորոյ ձեռն հեղեալ նենգաւորին զթոյնսն խառնեաց, զմահ ածելով յամենայն աշխարհս»[81]: «Մահը» ժամանակավոր երեւույթ է: Բարսեղ Մեծն ասում է. «Մահ թագաւորեաց մինչեւ ի գալուստն Քրիստոսի: Իսկ որովհետեւ «Երեւեցաւ շնորհն Աստուծոյ Փրկչին» (հմմտ. Տիտ. Բ. 11) եւ «ծագեաց արեգակն արդարութեան» (հմմտ. Մաղ. Դ. 2), «ընկղմեցաւ մահ ի յաղթութիւն» (հմմտ. Ա. Կորնթ. ԺԵ. 54), ոչ հանդուրժեալ եկեղեցութեան ճշմարիտ կենդանութեան»[82]: Ս. Տիրամայրը, կրելով լույսն ու օրհնությունը, Աստվածորդու ծնունդով ոտնակոխ արեց եւ՛ խավարը, եւ՛ անեծքը, եւ՛ մահը, հնազանդվեց Աստծուն՝ ասելով. «Ահաւասիկ կամ աղախին Տեառն» (Ղուկ. Ա. 38): Հատկանշական է ԲԿ «Որ ողորմեցար ի մեղս» մեծացուցեի երրորդ տունը, որտեղ շարականգիրը ձայնում է. «Այսօր ծնողաց նորին եղուր զմայր Բանին զօրհնիչն Եւայի»[83]:

Աստծուց մարդուն տրված ամենամեծ պարգեւը երանական կամ դրախտային կյանքն էր: Սակայն, ինչպես նկատում է Ս. Գրիգոր Աստվածաբանը, մարդը հրաժարվեց այդ ամենից՝ ընտրելով երկրային անցողիկ կյանքը. «Աւա՛ղ իմոյ տկարութեանս. քանզի ի՛մ է նախահօրն. զպատուիրանն մոռացաւ զտուեալն. եւ պարտեցաւ ի դառնութեան ճաշակէն. եւ միանգամայն ի կենաց փայտէն, եւ ի դրախտէն, եւ յԱստուծոյ, յաղագս չարութեանն արտաքս սահմանեալ լինի»[84]: Արդյունքում, ինչպես նշում է Գրիգոր Նյուսացին, «անապատացեա՛լ է դրախտին բնակիչն: Ծառն կենաց ի բոցեղէն սրոյն պահի: Փակեա՛լ կայ փափկութեան տեղին»[85] (հմմտ. Ծննդ. Գ. 23-24): Միայն Տիրամոր միջոցով է փակված դրախտը բացվում ողջ մարդկության առջեւ. «Փափկութեան դրախտին բացող բանալի»[86]: Իսկ դրախտի դռները բացվում են Քրիստոսի հրաշափառ ծնունդով, քանի որ Ս. Կույսը, լինելով «Կենաց ծառ»[87], «զանմահութեան պտուղն ի քէն եղուր նախնւոյ մօրն Եւայի ի մահաբեր երկանցն ազատելով»[88]:

80 «Գիրք եւ ճառ հոգեշահ», էջ 8:
81 ՄՄ. ձեռ. 4709, թ. 36բ:
82 Վենետիկ, ձեռ. 251, թ. 275ա:
83 «Հայնքաղ Շարական», Մծց. ԲԿ «Որ ողորմեցար ի մեղս», էջ 124:
84 «Գիրք եւ ճառ հոգեշահ», էջ 20:
85 ՄՄ. ձեռ. 4709, թ. 34ա:
86 «Հայնքաղ Շարական», Մծց. ԳԿ «Լեառն վիմածին», էջ 517:
87 Անդ, Մծց. ԴՀ «Աստուածածին գերագոյն քերովբէից», էջ 151-152:
88 Անդ:

**Ս. Աստվածածինը՝ մեծ բարեխոս.** Հայ Եկեղեցին իր ծիսապաշտամունքային համակարգում կարեւոր տեղ է հատկացրել սրբերին, որոնք իրենց կյանքի օրինակով, աստվածահաճո ու աղոթանվեր վարքով եւ արյան վկայությամբ արժանացել են հավատացյալների ակնածանքին եւ սիրուն: Շնորհք արք. Գալուստյանը սրբոց բարեխոսությունը սահմանում է այսպես. «Յաղթական եկեղեցիին աղօթքն է Զինուորեալ եկեղեցիին համար»[89]: Սրբոց բարեխոսությունը հիասքանչ նկարագրում է Երուսաղեմի երջանկահիշատակ պատրիարք Եղիշե արք. Տերտերյանը՝ նշելով, որ սրբերը «իրենց մէջ կը դաճարակրեն զԱստուած: Անոնք միջնորդներ են Աստուծոյ եւ մարդերու միջեւ, ոսկի շղթան երկիրը երկինքին կապող...Սուրբերը...պատկերը Աստուծոյ հոգիին եւ նկարագրին»[90]:

Հայ Եկեղեցին իր աղոթքներով դիմում է՝ Մարիամ Աստվածածնի, Հովհաննես Մկրտչի, առաքյալների, մարգարեների, վկաների, Ստեփանոս Նախավկայի, Գրիգոր Լուսավորչի, մաքրակրոն վանականների եւ խոստովանողների բարեխոսությանը: Քրիստոնեական Եկեղեցին սրբերի մեջ առանձնացնում է Տիրամորը՝ որպես մեծ բարեխոսի: Շնորհք արք. Գալուստյանը գրում է. «Առաջինը բնականաբար իր՝ Աստուծոյ Մայր ըլլալն է: Երկրորդ իր գերազանց սրբութիւնն է. եւ երրորդ՝ իր վերափոխուած ըլլալը»[91]: Այս է վկայում նաեւ ծիսապաշտական գրականությունը. «Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր...», «Ընկա՛լ, Տէ՛ր, զաղաչանս մեր, բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին, անարատ ծնողի Միածնի Որդւոյ քո...», «Բարեխօս ունիմք Սուրբ Մարիամ զԱստուածածինն, զփառաւորեալ եւ օրհնեալ միշտ Սուրբ կոյսն...», «Անկանիմք առաջի քո, Սուրբ Աստուածածին, եւ աղաչեմք զանարատ կոյսդ. բարեխոսեա՛ վասն անձանց մերոց...»[92]: Ս. Կույսի բարեխոսության մասին վարդապետությունն արտացոլված է նաեւ մեծացուցեներում: Շարականի միջոցով մենք խնդրում ենք Աստվածամոր բարեխոսությունը. «Որ քան զարեգական պայծառագոյն Մարիամ, մի՛ դադարիր բարեխօսել վասն մեր, Քրիստոսի Մայր Աստուծոյ մերոյ»[93]. «Արդ խնդրեմք ի քէն անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց առ Որդիդ քո Միածին»[94]. «Արդ աղաչեա՛, Մայր Աստուծոյ, զծնեալն ի քէն վասն մեր. զի ընդ նմին պահելով սուրբ յարութեամբ նորա նորոգեսցուք. առ նա միշտ բարեխօսեա՛ կեցուցանել զմեզ»[95]: Նախ հայցում ենք Տիրամոր բարեխոսությունը խոստովանողների համար. «Քաղաքավարեալ մարմնի անարատ վարուք այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբն վերափոխե-

89 **Շնորհք եպս. Գալուստեան**, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993, էջ 64:
90 **Վաչէ Ծ. վրդ. Իգնատիոսեան**, Բարեխօսութիւն սրբոց, Վենետիկ, 1978, էջ 7:
91 **Շնորհք եպս. Գալուստեան**, նշվ. աշխ., էջ 67:
92 «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից», էջ 173, 208, 461:
93 «Զայնքաղ Շարական», Մծց. ԴԿ «Ի քեզ եմք ապաւինեալ», էջ 165:
94 Անդ, Մծց. ԱԿ «Անարատ տաճար», էջ 110:
95 Անդ, Մծց. ԱԶ «Որ ընտրեցար ի սկզբանէ», էջ 88:

ցար յարքայութիւն Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ բարեխօս խոստովանողացս զքեզ մեծացուցանեմք»[96]: Երկրորդ՝ խնդրում ենք Ս. Կույսի բարեխոսությունը մեր եւ ննջեցյալների մեղքերի թողության համար. «Յարփւոյն լուսոյ ծագումն ի քեզ վառեաց զճրագ մարմնոյն լոյս աշխարհի որոյ զտեալ զպատկերն իրական զոր վերստին նորոգեաց յառաջին կերպարանն վասն որոյ բարեխօսեա՛ նորոգել զմեզ ի հնութենէ մեղաց»[97], «Յօղ քաղցրածաւալ ցանկալի զուարթնոցն նիւթեղէն սերովբէ դեղ մարգարտափայլ հիմն Եկեղեցւոյ մաքուր աղաւնի ամպ հովանաւոր Սուրբ կոյս Մարիամ առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա՛ անդադար հայցմամբ շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն»[98]: Երրորդ՝ Աստվածամոր բարեխոսությունն ենք աղերսում աներեւույթ չարի որոգայթից հեռու մնալու համար. «Բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնի եւ միշտ Կուսի՝ աղաչեմք. Տէ՛ր, փրկեա՛ զիս ի յորոգայթէ յաներեւոյթ թշնամւոյն»[99]: Տիրամոր բարեխոսությունն ենք խնդրում նաեւ մեր անձերի փրկության համար. «Աղաչեմք զքեզ Սուրբ Աստուածածին՝ առ Քրիստոս բարեխօսեա՛ փրկել զժողովուրդս իւր՝ զոր գնեաց արեամբ իւրով»[100]: Այս մասին երանաշնորհ Գարեգին Ա. Հայրապետն ասում է, որ Աստվածածինը «մարդկութեան փրկութեան միջոց եղած էր Քրիստոսի ծնունդեամբ ու կը մնայ մինչեւ այսօր որպէս բարեխօս մարդոց իր Որդւոյն մօտ»[101]:

96 Անդ, Մծգ. ԲՁ «Անթառամ ծաղիկ», էջ 354:

97 Անդ, Մծգ. ԴԿ «Աստուածատունկ խնկաբեր», էջ 132:

98 Անդ, Մծգ. ԳԿ «Լեառն վիմածին», էջ 517:

99 Անդ, Մծգ. ԴԿ «Մարգարէն ի փորոյ կիտին», էջ 82-83:

100 Անդ, Մծգ. ԱՁ «Որ զաւետիս Հոգւոյն», էջ 99:

101 **Գարեգին արեղայ Սարգիսեան**, Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու, Գանադա, 2003, էջ 232:

## РЕЗЮМЕ

Роль и фигура святой Богоматери в жизни Христианской Церкви и морали имеют двоякое значение: историко-богословское и морально-богословское. Они особо отражены в традиции циклов шаракана „Возвеличу" Армянской Апостольской Церкви. В статье анализируются эти моральные и богословские качества фигуры Святой Богоматери в свете данных шаракана „Возвеличу".

## SUMMARY

The image of Holy Virgin (Theotokos) has twofold theological signification in the Christian thougnt: historical-theological and moral-theological.

The present article has as its aim to present the image of Holy Virgin in the framework of historical and poral theological reflections. Taking in to consideration some historical New Testament's evidences, the article focuses on the theological-typological role that the Vitae of Theotokos played in the spiritual life and theology of Chrision Church, namely in the Magnificat hymns of the Armenian Apostolic Church, as well.